# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

« 2 » մարտի 2020 թվականի N: 95-Ա ք.Գյումրի

## ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշմամբ սահմանված «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի» 12-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 9-ի N 11-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020 թվականի փետրվարի 11-ի N:218 հրամանը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի մարտի 2-ի N:92 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. 2020 թվականի մարտի 2-ից լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ավագ մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը (ծածկագիր՝ 98-1.1-Մ5-1) ուսուցանվող աուդիտորի կարգավիճակով զբաղեցնող Մհեր Հարությունյանի հետ 2019 թվականի ապրիլի 18-ին կնքված N 22 աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Իսկականի հետ ճիշտ է՝*